**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**17.02.2021թ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 25.01.2021թ. N 30-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի ավագ մասնագետ Լիլիթ Քոչարյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Նունիկ Ասրյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ Մուշեղ Գրիգորյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ Դավիթ Ստեփանյանի, քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ Արման Մխիթարյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի և կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, ֆինանսների, հողօգտագործման, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պահպանության և կրթության ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 1 նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Լերմոնտովո համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____
Լիլիթ Քոչարյան _____
Նունիկ Ասրյան _____
Մուշեղ Գրիգորյան _____
Դավիթ Ստեփանյան _____
Սամվել Խառատյան _____
Արման Մխիթարյան _____
Անահիտ Բարոյան _____

Համայնքի ղեկավար՝
Էդիկ Չախալյան _____